

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությունը անց է կացնում նոտարների թեկնածուների որակավորման ստուգման աշխատանքները:

Նոտարի թեկնածուի որակավորման համար կարող է դիմել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործունակ յուրաքանչյուր քաղաքացի, որն ունի բարձրագույն իրավաբանական կրթություն և չունի դատվածություն:

Դիմորդը որակավորման ստուգման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության (հասցե՝ ք. Ստեփանակերտ, փետրվարի 20) աշխատակազմի ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կենտրոնական մարմին է ներկայացնում՝

- 1) դիմում, որտեղ պետք է նշվեն՝
ա. դիմորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթերում հայրանվան առկայության դեպքում),
բ. դիմորդի բնակության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսի համարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում).
- 2) 2 գունավոր լուսանկար՝ 4 x 6 չափսի,
- 3) անձնագրի պատճենը.
- 4) բարձրագույն իրավաբանական կրթության վկայականի (դիպլոմի) պատճենը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2015 թվականի մարտի 25-ը մինչև ժամը 17:00-ն:

Որակավորման ստուգման առաջին՝ թեստավորման փուլը անց է կացվելու 2015 թվականի մարտի 30-ին (թեստավորման փուլի անցկացման վայրի և ժամանակի վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվի դիմորդներին, ինչպես նաև կիրառարակվի ԼՂՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայք էջում (www.minjustnkr.am): Որակավորման ստուգման հետ կապված հարցերը կարգավորված են «Նոտարիատի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և ԼՂՀ արդարադատության նախարարի 2013 թվականի ապրիլի 22-ի «Նոտարիատի թեկնածուների որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ արդարադատության նախարարի հրամանով:

Որակավորման ստուգման հետ կապված տեղեկատվությունը ուղարկվելու է դիմորդներին՝ իրենց ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեներով, ինչպես նաև հրապարակվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայք էջում:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կենտրոնական մարմին 94-26-59 հեռախոսահամարով: